



Հաստատված է՝  
ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական  
կենտրոնի խորհրդի 12.04.2012թ. № 05-Ս որոշմամբ

**Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**№ 05-12-Ս**

12.04.2012 թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (**այսուհետ՝ Կենտրոն**) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Զոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Զեյնալյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան՝ Կարեն Անդրեասյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի՝ 1-ին մասի 4-րդ կետի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը հաստատում է սույն եզրակացությունը հետևյալի մասին.

**Պ Ա Ր Զ Ե Ց**

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Դիմող) 2012 թվականի հունվարի 30-ին դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է՝ որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ. ՀՕ-269-Ն) 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 14.<sup>1</sup>-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանի փաստաբկները հանգում են հետևյալին.

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (**այսուհետ՝ Օրենսգրք**) 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին՝ *վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:*

Դիմողի պնդմամբ հայցադիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ վիճարկվող դրույթում ձևակերպված նորմը, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ 3-րդ հոդվածի հետ համակարգային կապի մեջ, ենթադրում է դիմողի իրավունքները շոշափող վարչական ակտերը և գործողությունները վիճարկելու իրավունք, այսինքն՝ անձը կարող է համարվել դիմելու իրավունք ակնհայտորեն չունեցող, եթե իր կողմից վիճարկվող ակտը կամ գործողությունը չի շոշափում իր իրավունքներն ու օրինական շահերը, չի վերաբերում իրեն: Միննույն ժամանակ, վիճարկվող դրույթը չի ենթադրում, որ վարչական դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում կարող է ակնհայտության չափանիշով գնահատական տալ դիմողին վերաբերող ակտով իր նյութական իրավունքների խախտման հարցին, քանի որ խախտման առկայության կամ բացակայության հարցը պետք է որոշվի դատական քննության ընթացքում՝ գործի ըստ էության լուծման ընթացքում: Հակառակ դեպքում, կխախտվեն հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննության, դատական պաշտպանության սահմանադրական իրավունքները, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Ըստ Դիմողի, վիճարկվող դրույթի կիրառման դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է դատարանների կողմից դրա՝ հակասական մեկնաբանման և կիրառության մասին: Մասնավորապես՝ վարչական դատարանի որոշ որոշումներով՝ հայցադիմում ներկայացնելու իրավունք ակնհայտորեն չունենալու դրույթը դիտվել է որպես դիմողին վերաբերող ակտով՝ նրա նյութական իրավունքի խախտման ակնհայտ բացակայության գնահատման հիմք և այդ հիմքով գործի հարուցման փուլում հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Դիմողը դիմել է ՀՀ դատարանների նախագահների խորհրդին՝ առաջարկելով խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանում տալ վիճարկվող դրույթի կիրառման դատական պրակտիկայի վերաբերյալ: Դատարանների նախագահների խորհրդի 17.09.2011թ. թիվ 127 որոշմամբ վերոգրյալ դրույթի կիրառման դատական պրակտիկայի մասին տրվել է պարզաբանում, որով, ըստ էության, հաստատվել է ակնհայտության չափանիշով դիմողի նյութական իրավունքի խախտման գնահատման պրակտիկան՝ հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում:

Դիմողն օրինակ է բերել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/4237/05/09 և ՎԴ/2987/05/10 գործերով կայացված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու

մասին որոշումները և եզրակացրել է, որ իրավակիրառական պրակտիկան ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին տրվել է սահմանադրական բովանդակությունից չբխող մեկնաբանություն:

Դիմողը հանգել է այն եզրակացության, որ վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Մասնավորապես՝ վիճարկվող դրույթը, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, անհամաչափ սահմանափակում է անձի դատական պաշտպանության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը՝ դրանով իսկ հակասելով ՀՀ Սահմանադրության 14.<sup>1</sup>-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին և 43-րդ հոդվածին:

Վիճարկվող դրույթը, նման մեկնաբանությամբ, հնարավորություն է տալիս դատարանին՝ ի խախտումն կողմերի իրավահավասարության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, դատական պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների, առանց գործի ըստ էության քննություն իրականացնելու և քննվող գործի վերաբերյալ կողմերի դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն ընձեռնելու՝ վարույթի ընդունման փուլում գնահատել և ըստ էության լուծում տալ նյութական իրավունքի վերաբերյալ վեճին, ուստի, որոշել կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակությունը գործի հարուցման փուլում, որում կողմերի մասնակցությամբ դատական նիստ չի անցկացվում և որոշվում են դատավարական բնույթի հարցեր:

\*\*\*

Վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը պարզելու համար անհրաժեշտ է այն դիտարկել ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ անդամակցությամբ գործող մի շարք միջազգային պայմանագրերով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում որպես իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց հանդիսացող դատարան դիմելու իրավունքի համատեքստում:

Կենտրոնը գտնում է, որ Վիճարկվող նորմն իր հերթին դատարան դիմելու իրավունքի համատեքստում քննարկելու համար նաև անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք Վիճարկվող նորմով նախատեսված իրավական կարգավորումը սահմանափակում է անձի դատարան դիմելու իրավունքի իրացումը,
- եթե այո, ապա արդյո՞ք այդ սահմանափակումը համաչափ են, թե՞ ոչ:

Համաձայն Եվրոպական դատարանի մեկնաբանությանը՝ դատաքննության իրավունքը<sup>1</sup> բնորոշ է 6-րդ հոդվածի 1-ին կետին, դատարան դիմելու իրավունքը դրա կողմերից մեկն է: Դատարան դիմելու իրավունքի բացակայության վրա կարող է հիմնվել ցանկացած անձ, ով բողոքում է, որ հնարավորություն չի ունեցել այն դատարանին հայց ներկայացնելու, որն իրավասու է ուսումնասիրելու գործի բոլոր հանգամանքներն ու իրեն ներկայացված վեճին առնչվող օրենքը և պարտադիր որոշում ընդունելու:<sup>2</sup> Այս իրավունքը հավասարապես վերաբերում է անձանց, որոնք ձգտում են «քաղաքացիական» իրավունքների որոշմանը և նրանց, ովքեր մեղադրվում են «քրեական» հանցանք կատարելու մեջ:<sup>3</sup>

Եվրոպական դատարանն առաջին անգամ ճանաչել է այս իրավունքը **Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության** (1975թ.) քրեական գործով, որտեղ նա որոշեց, որ 6-րդ հոդվածով երաշխավորված մանրամասն, *արդարացի դատաքննության իրավունքը անօգուտ կլիներ, եթե հնարավոր չլիներ առաջին հերթին դատավարություն սկսել:*

Նշված գործով Եվրոպական դատարանը որոշեց, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը ներառում է դատարան դիմելու անքակտելի իրավունքը՝ միջազգային իրավունքի սկզբունքի հետ մեկտեղ, որն արգելում է **արդարադատության մերժումը:**

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում դատարան դիմելու իրավունքնի համատեքստում անդրադարձել է նաև հայցերի ներկայացման վերաբերյալ դատավարական պայմանների կիրառմանը, նշելով, որ քաղաքացիական, ինչպես նաև քրեական ոլորտներում արդարադատության պատշաճ իրականացման շահերն *արդարացնում են ողջամիտ վերջնաժամկետների և դատավարական պայմանների կիրառումը հայցերի ներկայացման վերաբերյալ*, ինչպես օրինակ՝ պատշաճ դատարանին գանգատ ներկայացնելու անհրաժեշտությունը:<sup>4</sup>

Եվրոպական դատարանը տարբեր գործերով քննադատության է ենթարկել այն հանգամանքը, ներպետական օրենսդրության համաձայն նախատեսվում են այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով անձը դատարան դիմելու արդյունավետ հնարավորություն չի ունեցել:

Վերոգրյալից հետևում է այն հանգամանքը, որ ամեն պարագայում անձի կողմից պետության դատական համակարգի մեջ մտնող որևէ դատական ատյանին ուղղված իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցի կամ գանգատի առնչությամբ պետք է իրականացվի արդարադատություն, այսինքն՝ դրանք պետք է ըստ էության քննվեն դատարանի կողմից, ինչի արդյունքում պետք է կայացվի պատճառաբանված դատական ակտ, և դատարանի կողմից արդարադատության իրականացումը հայցի կամ բողոքի առերևույթ անհիմն

<sup>1</sup> Եվրոպական դատարանը «դատաքննության իրավունքը» դիտարկում է որպես առավել ընդգրկուն իրավական կատեգորիա, որն իր մեջ ի թիվս այլոց ներառում է նաև «դատարան դիմելու իրավունքը»:

<sup>2</sup> Տե՛ս վերը նշված Լե Քոմիթեի և ուրիշների գործը:

<sup>3</sup> Դյուերն ընդդեմ Բելգիայի, 1979:

<sup>4</sup> MPP Գոլուբն ընդդեմ Ուկրաինայի, (դեկ.), 2005:

լինելու հիմքով չի կարող համարվել անձի՝ դատարան դիմելու իրավունքի արդարացված և համաչափ սահմանափակում:

\* \* \*

Կենտրոնը անհրաժեշտ է համարում պարզել սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթներին իրավակիրառական պրակտիկայի կողմից տրված բովանդակությունը նաև ըստ սուբյեկտների՝ ինչպիսի դրսևորում է ունեցել այն քաղաքացիների կողմից վարչական մարմինների ակտերի դեմ բերված հայցերի և հակառակը՝ վարչական մարմինների կողմից անձանց դեմ բերված հայցերի պարագայում:

Կենտրոնին մատչելի է միայն փաստաբանների տիրապետած տեղեկատվությունը, համաձայն որոնց՝ վարչական մարմինների ակտերի դեմ բերված հայցերը «ակընհայտ անհիմն» լինելու հիմքով վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումներում շարադրված իրավական դիրքորոշումները գերազանցապես այսպիսին են.

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության, իսկ նույն իրավադրույթի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ «հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը»:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան վարչական դատարան դիմելու իրավունք ունեն այն անձինք, որոնք համարում են, որ խախտվել են իրենց իրավունքները: Այսինքն, անձը ցանկացած կամ վերացական պահանջներով դատական պաշտպանության դիմել չի կարող, այլ նա կարող է դիմել դատարան, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն՝ վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները:

Վարչական դատավարությունն առաջին հերթին ծառայում է մարդու և քաղաքացու իրավունքների, անձնական շահերի պաշտպանությանը: Դա նշանակում է, որ վարչական արդարադատություն կարող է հայցել միայն այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), որը գտնում է, որ վարչարարությամբ իր իրավունքները կամ շահերը անմիջականորեն շոշափվել են: Անձինք չեն կարող դատարանում հայցել անձամբ իրենց չվերաբերող կամ իրենց համար իրավունքներ կամ պարտականություններ չառաջացնող որևէ ոչ միայն վարչարարության, այլև գործողության ստուգում միայն այն պատճառով, որ նրանք ընդհանրապես չառաջագրված են վարչական մարմինների իրավաչափ գործունեության մեջ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքը ամրագրելով այս մոտեցումը, չի ճանաչում, այսպես կոչված, «հանրամատչելի գանգատը», ամրագրելով միայն խախտված իրավունքների,

այսինքն, անձնական շահագրգռվածությունից հետևող դատական պաշտպանություն հայցելու տարբեր հնարավորություններ:

Նման պայմաններում վարչական դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի [...] որոշումներով ոչ միայն [...] անձի] որևէ իրավունք չի խախտվել, այլև նրա դիմումների վերաբերյալ ընդունվել է բարենպաստ վարչական ակտ: Այսինքն, Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի [...] որոշումների իրավաչափության հետ կապված [...] անձն] իր իրավունքների խախտման փաստի բացակայությամբ չի հանդիսանում վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների»<sup>5</sup>:

Կենտրոնի ջանքերը՝ գտնելու Վարչական դատարանի գեթ մեկ՝ վարչական մարմնի՝ հայցը վարույթ ընդունելը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով մերժելու մասին որոշում, ապարդյուն եղան:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերով որոշում ընդունելիս՝ «...սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով՝

1) իրավական ակտի պահանջվող տեսակը.

2) իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.

3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.

4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովվածությունը.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.

6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

Նման պահանջը ոչ միայն ենթադրում է ըստ ձևի և ըստ բովանդակության սահմանադրական վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտություն, այլև հատուկ ընդգծում է, որ իրավական ակտը գնահատելիս պետք է հաշվի առնել, թե ինչպե՞ս են տվյալ ակտում իրացվել սահմանադրական հիմնական նորմ-նպատակների և նորմ-սկզբունքների պահանջները: Դրանք առաջին հերթին վերաբերում են Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված 1-5-րդ հոդվածների հիմնարար դրույթներին:

<sup>5</sup>Մեջբերումը՝ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/4140/05/09 գործով 2009 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումից է:

Կենտրոնը գտնում է, որ խնդրո առարկա դրույթը ոչ միայն անհամաչափ սահմանափակում է դատարան դիմող սուբյեկտների դատական պաշտպանության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, այլև այն բացառապես կիրառվում է վարչական մարմինների ակտերի դեմ ներկայացված հայցերը վարույթ ընդունելը մերժելու նպատակով: Վերջինս, ընդհանրացված կերպով հակաում է ՀՀ Սահմանադրության նախաբանին, 1-ին, 3-րդ հոդվածներին:

\* \* \*

*Ելնելով վերոգրյալից, Կենտրոնի խորհուրդը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության նախաբանին, 1-ին, 3-րդ, 14.<sup>1</sup>-րդ, 18-րդ (1), 19-րդ (1) և 43-րդ հոդվածներին:*

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան